ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԳՈՐԻՍԻ ՅՈՒ. ԲԱԽՇՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 3 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Ուսումնական հաստատության անվանումը

Զ Ե Կ Ո Ւ Ց Ո Ւ Մ

ԹԵՄԱ *Բանավեճային դասերի կազմակերպումը պատմության դասերին և դրանց կիրառման առանձնահատկությունները*

ՀԵՂԻՆԱԿ *Մերի Դանիելյան*

Քննարկվել, հավանության է արժանացել

_____

_____

մեթոդմիավորման _____ նիստում: Արձանագրություն թիվ _____ :

Մեթոդմիավորման նախագահ _____ *Մերի Դանիելյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Տնօրենի տեղակալ _____ *Արաքսյա Առստամյան*
(ստորագրություն) (ազգանուն, անուն)

Ներածություն

Արդի աշխարհի սրընթաց զարգացումը հանգեցրել է փոփոխության հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում նաև կրթության ոլորտում: Ներկայումս ամենաբարդ և հրատապ խնդիրներից մեկն էլ հիմնարար գիտելիքներով զինված, ազատ, ինքնուրույն հասարակության մեջ լիովին ներառված և ստեղծագործ անհատների պատրաստումն ու դաստիարակումն է: Այս հարցում շարունակում է իր անգնահատելի դերը ունենալ դպրոցը:

Ստեղծված պայմաններում կարևորում են հանրակրթական նկատելի բարեփոխումները, որոնք աստիճանաբար ավելի ու ավելի անհրաժեշտ և անխուսափելի են դառնում: Անհրաժեշտ է կարևորել մանկավարժական ժամանակակից մոտեցումները, դիդակտիկական ակզբունքների դասավանդման մեթոդիկան:

Մեթոդաբանությունը գիտական հիմնախնդիրների լուծման ընթացքում ընդհանուր սկզբունքները, օրենքները, հասկացությունները կրում են ընդհանուր փիլիսոփայական բնույթ և հանդես են գալիս որպես գիտական ճանաչողության ընդհանուր մեթոդաբանություն:

Տեսությունը, որը չի հիմնվում պրակտիկայի վրա, հիմնավորված չէ, կրում է մտահայեցողական բնույթ: Պրակտիկան, որը հինավորված չէ գիտական տեսությամբ, տարերային է, չունի նպատակաուղղվածություն և պակաս արդյունավետ է:

Ահա թե ինչու մանկավարժական հետազոտություններում կարևոր է գիտության և պրակտիկայի հավասարաչափ զարգացումը: Առանց պրակտիկ գործունեության խոր և համակողմանի վերլուծության անհնար է նախանշել ուսումնադաստիրակչական գործընթացի զարգացման ուղիները:

Մանկավարժական հետազոտությունն ինքնանպատակ չէ, այն պետք է արտացոլի առաջավոր փորձը, ստուգվի պրակտիկայում և նպաստի ուսումնադաստիևակչական խնդիրների լուծմանը:

Մանկավարժական մեթոդաբանության մեջ կարևոր է հիմնախնդրի նկատմամբ ստեղծագործական մոտեցման սկզբունքը: Փորձը ցույց է տալիս, որ մանկավարժական շատ հիմնախնդիրներ հաջողությամբ լուծելու համար անհրաժեշտ է դրսևորել ստեղծագործական մտածողություն:

Ստեղծագործական մոտեցման սկզբունքը սերտորոն կապված է օբյեկտիվության սկզբունքի հետ: Հետազոտողի վարպետությունն այն է, որ ուղիներ և միջոցներ գտնի երևույթների էության մեջ թափանցելու համար՝ չդրսևորելով սուբեկտիվություն:

Օբեկտիվության սկզբունքի իրականացման մոթոդաբանական հիմքը մարդկանց պրակտիկ գործունեությունն է, որն արտացոլվում է մանկավարժական փաստերի

միջև: Մանկավարժական ցանկացած երևույթ մեկուսացված չէ և կապված է այլ երևույթների հետ, դրանց միակողմանի դիտարկումը կարող է սխալ եզրակացությունների հանգեցնել: Նշված սկզբունքը հնարավորություն է տալիս ուսումնասիրվող երևույթը մոդելավորել և հետազոտել բազմաբնույթ կապերի ու հարաբերությունների մեջ:

ՈՒսուցման գործընթացում մեթոդաբանությունը ձեռք է բերում նորմատիվային ուղղվածություն և նրա կարևոր խնդիրն է հետազոտական գործունեության մեթոդաբանական ապահովումը:

Մանկավարժական հետազոտություններում կարևոր նշանակություն ունի պատմականության և տրամաբանականականության միասնականության սկզբունքը: Օբյեկտիվ երևույթների ճանաչողությունը և տրամաբանական հիմնավորումը սերտորեն պայմանավորված են նրա պատմության իմացությամբ և հաստատական գործընթացի իմաստավորմամբ:

Բանավիճային դասերի կազմակերպումը պատմության դասերին և դրանց կիրառման առանձնահատկությունները

Պատմության դասավանդման գործընթացում մեր օրերում ձևավորվել են նոր մոտեցումներ: Փոխվել են նաև սովորողների կրթությանը ներկայացվող պահանջները: Գաղափարախոսության և տեսության տեսակետից պատմության դասավանդման մեթոդիկան աչքի է ընկնում պատմական անցյալը լուսաբանելու մոտեցումների բազմազանությամբ:

Նման պայմաններում ուսուցչից պահանջվում է առանձնակի ուշադրությամբ նախապատրաստվել պատմության դասին, առաջնորդվել տվյալ բաժնի համար նախատեսված մեթոդական պահանջներով, առկա ուսումնամեթոդական գրականությամբ, ինչպես նաև օգտագործել մեթոդիստների փորձը:

Կրթությունը արդյունավետ և հետաքրքիր դարձնելու նպատակով անհրաժեշտ է ուսուցման ընթացքում կիրառել մանկավարժական ակտիվ և բազմաբնույթ տեխնոլոգիաներ և մեթոդներ, որոնք ոչ միայն կլուծեն արդի կրթական պահանջները, այլև դասապրոցեսին մասնակից կդարձնեն դասարանի բոլոր երեխաներին՝ հաշվի առնելով նրանց տարիքային-հոգեբանական առանձնահատկությունները:

Պատմության ուսուցումը ևս չի կարելի կազմակերպել և անց կացնել առանց ուսուցման մեթոդների: Մեթոդի ճիշտ ընտրությունից և նրա ճիշտ կիրառումից է կախված պատմության դասի արդյունավետությունը:

Մանկավարժության մեջ մեթոդը հասկացվում է մի կողմից որպես ուսուցչի, իսկ մյուս կողմից՝ որպես աշակերտի գործունեության եղանակ: Այլ կերպ ասած՝ մեթոդը փոխազդեցության, փոխգործողության եղանակ է, ուսուցչի և աշակերտի աշխատանքի առանձնահատկությունների արտահայտությունն է ուսուցման գործընթացում: Կարելի է ասել՝ մեթոդը ուսուցչի համար դասավանդման, իսկ աշակերսի համար՝ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները յուրացնելու եղանակն է:

Այսպիսով, ուսուցման մեթոդը աշակերտի և ուսուցչի գործունեության հիմնական ձևն է, որն ապահովում է կրթական խնդիրների լուծման համար անհրաժեշտ սովորողների գիտելիքների, հմտությունների ու կարողությունների ձևավորումը:

Պատմության ուսուցման ժամանակը պետք է կիրառվեն այնպիսի մեթոդներ ու հնարներ, որոնք նպաստում են սովորողների հիշողության ամրապնդմանը ու

զարգացմանը: Առանց դրանց անհնար է պատմության դասավանդումը: Դրանք պետք է նաև հետաքրքրություն առաջացնեն սովորողների մեջ և իհարկե բարձրացնեն դասապրոցեսի արդյունավետությունը:

Այսօր ուսուցիչն ունի մեծ հնարավորություններ մեթոդների, հնարների ազատ ընտրության մեջ՝ իհարկե չանտեսելով չափորոշչային պահանջները: Մեթոդների բազմազանությունը անհրաժեշտ է համակարգել, կիրառել տեղին և ըստ անհրաժեշտության:

Ժամանակակից դիդակտիկայի մեջ կիրառվող մեթոդների ցանկում կարևոր տեղ է զբաղեցնում ուսումնական բանավեճը: Մեթոդի արդյունավետությունը պատմության դասերին բավականին բարձր է, համեմատած մի շարք այլ մեթոդների հետ:

Ուսումնական բանավեճը մտքերի, կարծիքների, դրույթների նպատակամետ և կանոնակարգված փոխանակություն է հանուն ճշմարտության բացահայտման, ընդ որում խմբի բոլոր անդամները փոխանակության կազմակորպման մասնակից են: Ի տարբերություն զրույցի՝ բանավեճը մեկ առանձին թեմա է, որոշակիորեն սահմանված կարգով: Բանավեճի ժամանակ խոսողին չեն ընդհատում: Բանավեճը վիճաբանություն չէ: Բանավեճի նպատակը իմացական հետաքրքրության խթանումը, սովորողների նոր գիտելիքների ձեռք բերումը, սեփական կարծիքի ամրապնդումը և այն պաշտպանելու կարողության զարգացումը, ինֆորմացիայի ամրապնդումը, նյութի ստեղծագործական ընկալումը և արժեքային կողմնորոշման ձևավորումն է: Բանավեճը պատմական իրադարձություններին նոր հայացքով նայելու հնարավորություն է տալիս: Այս մեթոդի կիրառումը պատմության դասաժամերին կապահովի կայուն արդյունք, աշակերտների մեծամասնությանը կներգրավվի դասընթացին:

Բանավեճի անցկացման կանոններն են՝

- Ցանկացած միտք, արտահայտություն, պնդում պետք է հիմնավորվի փաստերով:
- Յուրաքանչյուր մասնակից պետք է արտահայտելու հնարավորություն ունենա:
- Պետք է խոսել կարճ և քննարկումը չդարձնել որևէ մեկի մենաշնորհը:

- Ամեն մի դիտողություն, տեսակետ պետք է ուժադրությամբ ուսումնասիրվի:
- Քննարկման ընթացքում անթույլատրելի է անձը վիրավորելը , պիտակավորեկլը, վիրավորական խոսքերը և վարքագծի նմանատիպ այլ դրսևորումները:
- Ելույթները պետք է կազմակերպված բնույթ կրեն, յուրաքանչյուր մասնակից կարող է խոսել միայն վարողի թույլտվությամբ, կրկնակի ելույթնորը կարող են լինել հիամնական ելույթներից հետո, «լեզվակռիվը» անթույլատրելի է:

Բանավեճը համարվում է կայացած, եթե մասնակիցները հասնում են առաջադրված նպատակին:

- Բանավեճի գլխավոր նպատակը իմացական հետաքրքրության խթանումն է
- Բանավեճն ուղղված է սովորողների կողմից նոր գիտելիքնեի ձեռքբերման, սեփական կարծիքի ամրապնդմանը , այն պաշտպանելու կարողության զարգացմանը
- Բանավեճը բարձր արդյունավետություն է հանդես բերում տեղեկատվության ամրապնդման, ուսումնասիրվող նյութի ստեղծագործական ընկալման և արժեքային կողմնորոշման ձևավորման կողմնորոշման առումով:

Բանավեճն ունի սկիզբ, բուն ընթացք և ամփոփում: Մեթոդն հնարավորություն է տալիս բացահայտել ընկալման աստիճանը, կատարել գիտելիքի ակտիվ փոխանցում և ապահովել խմբի ներգրավվածության բարձր մակարդակ:

Սոկրատեսյան բանավեճ: Երկխոսություն, այլ ոչ թե բանավեճ, կարծիքների փոխանակում, այլ ոչ թե առճակատում՝ սոկրատեսյան փոխզիջումային հաղորդակցության բանաձևն է:

Սոկրատեսը կարծում էր,որ խնդրի լուծումը պահանջում է պրոբլեմը մանրացնել , բաժանել հարցերի և յուրաքանչյուրի պատասխանը ստանալ առանձին , որն էլ մարդուն հասցնում է փնտրած ճշմարտությանը:

Սոկրատեսյան մեթոդը պատմության դասերի ընթացքում օգտագործելով կարելի է հասնել աշակերտների հիմնական ընկալումներին և գիտելիքի մակարդակի ստուգմանը:

Իրականում պատմությունից հայտնի է , որ Սոկրատեսը ավելի շատ հարցադրումներ էր անում , քան պատասխանում:

Սոկրատեսյան մեթոդը խրախուսում է հարցերի քննարկման եղանակը: Այս տարբերակով կարելի է զարգացնել աշակերտների մտածողությունը, էթիկան, վարվելաձևը , արտահայտվելու ձևերն ու դիրքորոշում ունենալու կարողությունը: Սոկրատեսյան բանավեճի ժամանակ ընտրվում է փաստը, դեպքը կամ իրադարձությանը վերաբերող հարցեր, որոնց շուրջ ծավալվում է քննարկումները: Այստեղ կարևորվում է ուսուցչի դերը և նախնական կատարված

աշխատանքը, քանի որ պետք է կազմակերպել և պատրաստել մեթոդի կիրառման համար ընտրված միջոցները, նյութերը (օր.՝ բանավեճի թեման, հետագա քայլերի համար անհրաժեշտ նյութերը և այլն): ՈՒսուցիչը պատմության դասաժամերին կիրառելով սոկրատեսյան բանավեճը, պետք է լինի ուղղորդողի, կառավարողի, վերահսկողի դերում, որպեսզի ճիշտ ընթանան աշխատանքները և ունենա հստակ ձևակերպված վերջնարդյունք:

Բանավեճի այս ձևը ևս գնահատվում է ըստ առաջադրած նպատակի: Գնահատումը կատարվում է ինքնագնահատման, ռուբրիկի կամ խորհրդածությունների մատյանի և թղթապանակի միջոցով:

Դեբատ: Բանավեճի հիմնական ձևերից: Այն հանդիսանում է կրթության և դաստիարակության արդյունավետ միջոցներից: Դեբատը տարածված էր Հին Հունաստանում՝ որպես ժողովրդավարության դրսևորման կարևոր տարր:

Տարբերակում ենք դեբատի 2 տեսակ՝ պաշտոնական, որոնք ունեն կանոններ և ժամանակակարգ և ոչ պաշտոնական, որոնք առանց կանոնների են:

Այս մեթոդի կիրառումը պատմության դասաժամերին կնպաստի խնդրի, վիճահարույց հարցերի քննարկումը, տարբեր տեսակետերի արտահայտումը ավելի հեշտ կազմակերպելուն: Մեթոդը որպես ուսուցման միջոց նպաստում է աշակերտների մտահորիզոնի ընդլայնմանը, մտավոր, հետազոտական կարողությունների զարգացմանը:

Դեբատը հարմար է պատմության դասաժամերի համար, քանի որ հնարավորություն է տալիս աշակերտներին քննարկվող հարցերի վերաբերյալ ներկայացնել իրենց տեսակետերը, հակափաստարկները, թույլ է տալիս զարգացնել և հստակեցնել գիտական գիտելիքները, ընդլայնել մտահորիզոնը:

Ձևավորվում են 2 հակադիր խմբեր, որոնց քննարկումների, բանավեճի արդյունքում արձանագրվում են ճիշտ պատասխանները և նպատակների իրագործումը:

Դեբատը նպաստում է սովորողների՝

1. մտահորիզոնի ընդլայնմանը,
2. մտավոր կարողությունների զարգացմանը,
3. հետազոտական և կազմակերպչական հմտությունների զարգացմանը,
4. ստեղծագործական հմտությունների զարգացմանը,
5. հաղորդակցական հմտությունների զարգացմանը:

Դեբատի արդյունքները նույնպես արձանագրվում են և արդյունքում ստեղծվում է գնահատման արձանագրություն:

Դեբատի հիմնական տարրերն են՝

- թեման
- պնդումը պաշտպանող կողմը
- պնդումը ժխտող կողմ
- փաստարկներ
- ապացույցներ
- հանդիպակաց հարցեր
- գնահատողների որոշումը:

Դեբատի անցկացման հիմնական սկզբունքներն են՝

- հարգալից վերաբերմունք
- արդարացիություն
- հանդուրժողականություն
- պարտվողներ չկան:

Դեբատները զարգացնում են՝

1. քննադատական և տրամաբանական մտածողությունը,
2. մտքերի ձևակերպման հմտություն,
3. բանավոր խոսքի հմտություն,
4. տարբեր հայացքների ու մոտեցումների նկատմամբ հանդուրժողականություն,
5. վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
6. թիմում աշխատելու հմտություն,
7. խնդրի լուծման վրա կենտրոնանալու ունակություն,
8. հրապարակային ելույթ ունենալու հմտություն:

Կարծում եմ, որ մեթոդի արդյունքները ևս խոսում են պատմության դասերին դեբատը կիրառելու մասին:

Բաց բանավեճ կամ գնահատվող բանավեճ: Այս մեթոդի կիրառումը ապահովում է աշակերտների ղեկավար մասնակցությունը ուսուցման գործընթացին: Այս մեթոդի կիրառման ընթացքում անհրաժեշտ է ուշադիր լինել հատկացված ժամանակին, քանի որ այն խիստ սահմանափակ է, և պետք է աշակերտները հետևեն անհրաժեշտ կանոնների պահպանմանը: Այստեղ ուսուցչի մասնակցային դերը նվազում է: Բաց բանավեճի ընթացքում յուրաքանչյուր պատասխան լինի սխալ, թե ճիշը արժանանում է գնահատման՝ խրախուսական կամ տուգանային միավորների: Այդ ամենը արձանագրվում է գնահատման թերթիկում: Բաց բանավեճի կիրառումը դասաժամերին աշակերտների մոտ զարգացնում է լսելու կարողությունը, քաղաքավարի վերաբերմունքն

հանդուրժողականությունը:

Բանավեճի մասնակիցների գնահատումը կատարվում է գնահատման թերթիկում կամ ռուբրիկում:

Բաց բանավեճի հիմնական տարրերից է պլանը: Չի կարելի նախապես դերերը բաշխել: Որպեսզի մեթոդի կիրառումը արդյունավետ լինի անհրաժեշտ է խստիվ հետևել կանոններին :

Եզրակացություն

Դասի արդյունավետությունը կախված է ուսուցչի վարպետությունից և մեթոդների , հնարների ճիշտ ընտրությունից: Կարծում եմ, որ ճիշտ է ասված , որ ուսուցման մեթոդները ուսումնական պրոցեսի կարևորագույն բաղադրիչներից մեկն է: Առանց գործունեության համապատասխան մեթոդների անհնարին է իրականացնել ուսուցման նպատակներն ու խնդիրները, հասնել աշակերտների կողմից ուսումնական նյութի որոշակի բովանդակության յուրացման:

Ուսուցման գործընթացում, բացի մոթոդից կիրառվում է նաև հնարը, որը ուսուցման մեթոդի բաղկացուցիչ մասն է, նրա մի կողմը, տարրը:

Ուսուցման գործընթացում մեթոդին կարող է փոխարինել հնարը, հնարին՝ մեթոդը: Դա կախում ունի ուսումնասիրվող նյութի բովանդակությունից, տրամաբանությունից, սովորողների տարիքային հնարավորություններից:

Ուսուցման մեթոդների ու հնարների հիմնական խնդիրն է միասնաբար լուծել սովորողների կրթության , դաստիարակության և զարգացման խնդիրները:

Պատմության դասաժամերի համար առավել կիրառելի են համարվում այն մեթոդներն ու հնարները , որոնց միջոցով կարելի է զարգացնել քննադատական մտածողություն, ստեղծագործական, վերլուծելու, կազմակերպչական կարողություններ, բանավոր խոսքի, մտքերի ճիշտ արտահայտչաձև:

Կարծում եմ այդպիսի մի մեթոդ է բանավեճի մեթոդը իր տարատեսակներով: Հատկապես որոշ թեմաների համար կիրառումը կարելի է համարել նպատակահարմար և տեղին:

Գրականության ցանկ

1. Ասատրյան Լ., Հակոբյան Գ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Երևան, 2010:
2. Գյուլբուդաղյան Ա., Հայոց պատմություն 6-7 ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
3. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2013:
4. Алехин А.Ю. Общие методы обучения в школе, К.: Радянська школа, 1983:
5. Вагин А. А., Методика переподавания истопи в школе, М., 1968: